

Հ Ր Ա Մ Ա Ն N 341-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«13» ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**«ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԴԻԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՆՈՏԱՐ ԶԵՄՄԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի հուլիսի 6-ի N ԵՆՊ-414/18 գրությունը և «Արարատի մարզ» նոտարական տարածքի նոտար Դ. Աբրահամյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. 2018 թվականի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 10-ը ներառյալ «Արարատի մարզ» նոտարական տարածքի, նստավայր՝ քաղաք Արտաշատ նոտար Դիանա Աբրահամյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Արարատի մարզ» նոտարական տարածքի, նստավայր՝ քաղաք Արտաշատ նոտար Զեմմա Գաբրիելյանին:

Ժամանակավոր պաշտոնակատար՝



ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ